ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշսիի 1

№ 2061-Ա «07» հունիսի 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ 4371-ARM ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածով, ինչպես նաև՝ հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև կնքված թիվ 4371-ARM վարկային համաձայնագիրը.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ նաև ԱԶԲ) միջև 2023 թվականի նոյեմբերի 27-ին կնքված թիվ 4371-ARM վարկային համաձայնագրով (այսուհետ՝ Համաձայնագիր) հաստատված Երևանի քաղաքային զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման աշխատանքները վերապահել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ):

2. «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել.

1) սույն որոշման ստորագրումից հետո երկօրյա ժամկետում Գանձապետարանում համապատասխան գանձապետական հաշիվների բացումը և դրանց կառավարումը.

2) Ծրագրի համար բացված գանձապետական հաշիվների, ինչպես նաև՝ ԱԶԲ ընթացակարգերով մասհանման հայտերի ներկայացման և այլ էլեկտրոնային համակարգերի համար լիազորված անձանց ստորագրությունների նմուշների ներկայացումն ու փոփոխումը:

3.Ծրագրի ղեկավարին.

1)ստորագրում է շինարարության ազդեցության գոտու մեջ ներառված Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (այսուհետ՝ ՀՕՏԾ) հետ կապված բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման ծանուցումները, գույքերի նկարագրության արձանագրությունները, գույքերի ձեռքբերման պայմանագրերը և համաձայնագրերը, հանդես է գալիս ՀՀ կադաստրի կոմիտեում և նոտարական գրասենյակում.

2)ապահովում է Ծրագրի շրջանակներում փաստաթղթաշրջանառությունը և վերջինիս իսկության հավաստումը.

3) ապահովում է շինարարության կազմակերպումն ու իրականացումը (ըստ հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի)՝ սահմանված ժամկետների պահպանմամբ:

4.Սահմանել, որ՝

1)Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի իրականացման խմբի աշխատակիցների աշխատավարձերի և դրան հավասարեցված եկամուտների, նպաստների և աշխատակիցներին վճարվող այլ վճարների ֆինանսավորումն իրականացվում է ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումը վերապահել «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենին:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ